ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2022 թվականի N 495 - Ա

«ՍՅՈՒՆԻՔ-ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝
1) «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի
2) «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.
3) «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.
4) «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.
5) «Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» խորագրով միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

09.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 8
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. դեկտեմբերի 8-ի
N որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ»-միջոցառումներ

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա.Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ

5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

12/8/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. դեկտեմբերի 8 -ի
N որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ»-միջոցառում

Միջոցառման հիմնական նպատակն է՝ ձևավորել ՀՀ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի միջև մշակութային կամուրջ: Մշակութային միջոցառումների միջոցով աջակցել մշակութային փորձի փոխանակման ու փոխհամագործակցության զարգացմանը և միմյանց ներկայանալ բնակավայրին բնորոշ մշակույթով:

Ապահովել մարզերի մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, մարզերի միջև մշակութային սերտ կապերի ամրապնդումը:

Միջոցառմանը կմասնակցեն «Սյունիքյան մշակութային շրջագայություն» միջոցառմանը մասնակցած մարզի երաժշտական կրթօջախների լավագույն սովորողներ, ինտելեկտուալ խաղի մարզային փուլում մրցանակային տեղեր գրաված աշակերտներ, պատանի ստեղծագործողներ, նկարիչներ, ասմունքողներ:

Տեղի կունենան առանձին հանդիպումներ մշակույթի ոլորտի պատասխանատուների միջև:

Գիտաճանաչողական այց մարզի համայնքների պատմամշակութային վայրեր:

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառման շրջանակներում այցելություններ.

- Հայաստանի ազգային պատկերասրահի Եղեգնաձորի մասնաճյուղ ՊՈԱԿ
- ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան
- Վայոց Ձորի Արենիի քարանձավների համալիր, «Թռչնի քարանձավ»
- Նորավանք վանական համալիր
- Սիսիանի Շաքիի ջրվեժ
- Համո Սահյանի տուն-թանգարան
- Տաթևի վանական համալիր
- Միջոցառման մասնակիցների կողմից կկատարվեն հարգանքի տուրք և ծաղկադրում Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, անհետ կորածների հուշարձանին, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:

12/8/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. դեկտեմբերի 8--ի
N [illegible] որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառման

Միջոցառման նպատակը.

Մշակութային միջոցառման հիմնական նպատակն է [illegible]նիքի և Վայոց Ձորի մարզերի միջև մշակութային կամուրջ: Մշակութային միջոցառումների միջոցով աջակցել մշակութային փորձի փոխանակման ու փոխհամագործակցության զարգացմանը:

Ապահովել մարզերի մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, մարզերի միջև մշակութային սերտ կապերի ամրապնդումը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառմանը մասնակցում են ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության և «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղավազքի մրցանակակիրներ, 2022թ. գիտական փառատոներին մասնակցած մարզի լավագույն պատանի մասնակիցներ, երաժշտական կրթօջախների շնորհալի սաներ, պատանի ստեղծագործողներ, ասմունքողներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումներն անց են կացվելու 2022թ. դեկտեմբեր ամսին, Վայոց Ձորի և Սյունիքի մարզում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտ, սնունդ, կեցություն և ընթացիկ այլ ծախսեր/ հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

12/8/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 4
Սյունիքի մարզպետի
2022թ. դեկտեմբերի 8-ի
N ... որոշման

«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառման նախահաշիվ

N	Ծախսերի անվանումը	հոդված	գումարը /ՀՀ հազ. դրամ/
1.	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	210.0
2.	Հանրային սննդի մատուցում	4236	484.0
3.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	155.0
4.	Մասնագիտական ծառայություն	4241	25.0
5.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	4261	10.0
6.	Այլ ծախսեր	4861	16.0
	Ընդամենը		900.0

12/8/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. դեկտեմբերի 8-ի
N [illegible] որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման վայրը
1.	«Սյունիք-Վայոց Ձոր մշակութային կամուրջ» միջոցառում	դեկտեմբեր	ՀՀ Վայոց Ձորի մարզ ՀՀ Սյունիքի մարզ
1.1	Միջոցառման մասնակիցների հավաք և մեկնում Վայոց Ձոր	դեկտեմբեր	ք. Կապան Գ.Նժդեհի հրապարակ
1.2	Այցելություն «Հայաստանի ազգային պատկերասրահի Եղեգնաձորի մասնաճյուղ» ՊՈԱԿ և Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան	դեկտեմբեր	ՀՀ Վայոց Ձոր ք.Եղեգնաձոր
1.3	Հարգանքի տուրք և ծաղկադրում Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, անհետ կորածների հուշարձանին, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին	դեկտեմբեր	ք.Եղեգնաձոր
1.4	Ընդմիջում /ճաշ/	դեկտեմբեր	ք.Եղեգնաձոր
1.5	Վայոց Ձորի Արենիի քարանձավների համալիր՝ «Թռչնի քարանձավ»	դեկտեմբեր	Վայոց Ձոր
1.6	Այցելություն Նորավանք վանական համալիր	դեկտեմբեր	Վայոց Ձոր
1.7	Մեկնում ՀՀ Սյունիքի մարզ	դեկտեմբեր	ք.Սիսիան
2.1	Այց Համո Սահյանի տուն-թանգարան	դեկտեմբեր	Սիսիան համայնք գ. Լոր
2.2	Այցելություն Շաքիի ջրվեժ	դեկտեմբեր	Սիսիան համայնք
2.3	Այցելություն Տաթև վանական համալիր	դեկտեմբեր	Տաթև համայնք
2.4	Վերադարձ Կապան համայնք	դեկտեմբեր	ք.Կապան

12/8/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան